լրագիրս տեղւոյդ՝ ի գիտութիւն ընդհանուր Հայոց, որպէս և մեք ունիմք ի մտադիր հրատարակել ի պաշտօնական Արարատ ամսագրի Մայր Աթոռոյս։

Զհաւատիս խորին յարգանաց մատուցեալ խոնարհաբար
մնամ
Ամենապատիւ Սրբազնութեանդ
ամենախոնարհ ծառայ և որդի
Տեսուչ Գէորգեան Ճեմարանի Արշակ Նահապետեան։

Թ. 188.

Ի 26 Նոյեմբերի 1882 ամի
Ի Ս. Էջմիածին.

ՍՐՏԻ ԿՍԿԻԾ.

Ձեռքը խաչած, գծուած շորեր է հագին,
Նա աղքատ է, բայց հարուստ միտքն ու հոգին,
Ճշմարտութեան նա զինուոր է մտերիմ
Բայց խեղդվումէ նորա ձայն մէջ ամբոխին.
Եւ յուսահատ երբեմն դառն վշտերից
Այս խօսքերով յայտնում սրտի իւր կսկիծ,
«Հացն յիմարին՝ փողն անգութին ես տուած.
«Մենք այս աշխարհ հանդիսատես ենք եկած,
Ո՛վ Աստուած։»

***

Ով զօրեղ է, մերկ սուր բռնած իւր ձեռքին՝
Խրոխտալով մահ է սպառնում անզօրին,
Տներ քանդում՝ որբեր զրկում անդադար,
Ինքն անկարօտ՝ ուտում, խմում ճոխաբար.
Հապա ի՞նչպէս կսկիծ ի սիրտ ես չասեմ,
«Հացն յիմարին՝ փողն անգութին ես տուած,
Մենք այս աշխարհ հանդիսատես ենք եկած,
Ո՛վ Աստուած։»

***

Իւր կեանքի մէջ՝ ով իւր անձն է միշտ պաշտել.
Ընկերներին ատել, խաբել ու դաւել,
Ով իւր բերնում լեզու, գլխին խելք չունի,
Բայց բռնակալ վարմունքով միշտ անուանի,
Փառք ու պատիւ, կարծես, նորան է պահուած.
Անզօր, համեստ աշխատութիւն անարգուած,
Հապա ի՞նչպէս կսկիծ ի սիրտ ես չասեմ,

«Փառքն յիմարին, փողն անգութին ես տուած.
«Մենք [այս] աշխարհ հանդիսատես ենք եկած,
Ո՛վ Աստուած.»

***

Կորչե՞նք, բայց ո՞ւր, ապականո՛ւած մարդկութիւն,
Մինչ ե՞րբ գգուես կիրք, շահ, կեղտոտ բռնութիւն.
Ուր որ դնանք, չկայ արդար իրաւունք.
Սրտերի մէջ մարած է սուրբ զգացմունք.
Եթէ բանանք մենք մեր բերան բողոքել,
Շղթայակապ կընկնենք մութ բանտ ու անել.
Այնտեղ նոյնպէս կըրկրնելով այս խօսքեր,
Որ սրանցով մեղմանան գէթ մեր վէրքեր,
«Հացն յիմարին՝ փողն անգութին ես տուած.
«Մենք այս աշխարհ հանդիսատես ենք եկած.
Ո՛վ Աստուած.»

ՍԷԹ.

Քիշնեւում բնակուող մեր սիրելի Ազգայիններից Ցարգելիք ամանք իւրեանց մէջ հանգանակած եւ ուղարկած են Ս. Սինոդին յօգուտ Մայր Աթոռոյս Ճեմարանի Էրէր- Հարէ-ը Էրէոն-Ն Լ ՀԻՆԳ ՐՈ-ԲԷՐ, որոց անուններն եւ նուէրքի քանակութիւնը հրատարակելով՝ կմատուցանենք նոցին Ցարգութեանց մեր հրապարակական խորին շնորհակալութիւնը:

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ ՔԻՇՆԵՒԻ.

Գրիգոր Սարգսեան Զաքարեանց	25
Յակովբ Պալիոզեանց	25
Պօկղանով Բաբովիչով	25
Սերգէյ Իվանովիչ Ձերքեզ	25
Աբգար Աղայ Զախարեանց	25
Պարիս Բաղդասարեանց	10
Յակովբ Բոբովիչ	10
Գաբրիէլ Լուսիկեանց	10
Խաչիկ Սիմոնի Թոքշանցի	10
Սարգիս Աստուածատեան Բօբով	10
Անանստասի Գայլով	10
Յակովբ Ուսքաղուլ	10
Խաչիկ և Գրիգոր Լուսեղինով	10
Մարիամ Խաթուն Զախարեանց	10
Աղայ Ցարութիւն Ուսքաթովեանց	10
Աղայ Ստեփան Լիպեանց	10
	235